դուք ի՞նչ կպատասխանեք: Բազմածներից ոչ ոք ոչինչ չասաց: Դարձյալ շահն ասաց՝ այժմ ի՞նչ ես կամենում, գրիր խնդրագիր, և ես կկատարեմ քո խնդիրը: (Կաթողիկոսը) երկրպագելով արքային՝ ելավ գնաց և նրան խնդրագիր գրեց, թե հզոր և մեծ թագավորի ոտքերի հողին թող հայտնի լինի, որ հրամայեցիր, թե խնդրագրով հայտնիր մեզ քո խնդիրը, բայց քո ծառան իր համար ինչք չի խնդրում, այլ հիշատակ է խնդրում քո տերությունից, որ նա հավիտյան քո կյանքի ու զավակների համար սերնդե սերունդ՝ այսինքն Էջմիածին գյուղի տասանորդը շնորհել վանքին, քանզի ի բնուստ վանքինն է եղել, բայց մեր առաջնորդների թուլությունից խաները հափշտակել են, որ առանց թագավորների գիտության իրենք վայելեն:

Իսկ երբ թագավորը կարդաց խնդրագիրը, հրամայեց գտնել մատյանը. և մատյանը քննեցին, չկար: Շահին հայտնեցին: Հրամայեց արքան գրել արքունական հրաման՝ նոմոս, որ կոչվում է ռազամ, և տալ նրան, որ եթե մինչև իսկ մի կույր պառավ էլ նստի Էջմիածնում, տիրի այն, և իշխաններից և թագավորներից ոչ ոք չհանդգնի կպչել կամ մոտենալ այն տասանորդներին: Իսկ ով հակառակվի, թշնամի է Շահ Սաֆիի օջախին: Գրեց այս և արքունական հրամանը կաթողիկոսության և կնքելով տվեց նրան:

Հրամանը առած (կաթողիկոսը) եկավ Սուրբ Աթոռ Էջմիածին: Սկսեց ձեռք զարկել բարեգործության: Նախ գյուղերի տասանորդը գնեց, այսինքն (հետևյալ գյուղերի) Քասաղինը, որ Նիգ գավառում է, Թեղենիսինը[143], Սանտոյինը, Սևավերինը[144], Նորքինը, Նորագեղինը, Բաղռինջինը[145], Բյուրականինը և այլ շատ տեղերի, որոնք այժմ Սուրբ Էջմիածնին են ենթակա: Նաև գետնի տակ անցք փորեցին, երկու տեղից ջուր հանեցին Էջմիածին գյուղից հեռու, տարան հանդերը, արտերը ոռոգելու համար. մեկը բերին գյուղը, որ ձմռանը անասունները խմեն: Նա այս ջրի վրա ջրաղացներ և դինգեր շինեց, լիճ արեց և լցրեց ձկներով: Տունկեր տնկեց լճի ափին, բազմաթիվ սերմեր և այլ բարիքներ ցանեց:

Իսկ ի՞նչ ասեմ հոգևոր գործի և միաբանությունը բազմացնելու մասին: Ուրիշ շատ են սրա բարությունները, բայց մենք չնկարագրեցինք, որպեսզի չգայթակղվենք: Մնացած բաները և նրա մահը կպատմենք իր տեղում:

ԳԼՈՒԽ ԼԶ
ԵՐԿՆՔԻՑ ԼՈՒՅՍ ԻՋՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պետք է այս պատմությունը առաջ գրեինք՝ 1086 (1697) թվին, բայց մոռացմամբ այստեղ գրվեց: Քանզի մինչդեռ մանուկ էի ես մեր տանը՝ Քանաքեռում, Խաչվերացի օրը իմ հոր հետ գնացինք մեր այգին, որ մոտ է Կարմիր-Բերդ կոչված գյուղին՝ Հրազդան գետի ափին՝ կամրջի ներքևը: Երբ արեգակը մտավ, իմ հայրը երեկոյան ժամին աղոթում էր, դեռևս չէր մթնել, այլ օրվա լույսը դեռևս մնում էր: Հանկարծակի արևելյան կողմում կապույտ եթերը պատռվեց և սաստիկ լույս իջավ, ահագին լայն էր ու երկար: Իջավ մինչև մոտեցավ երկրին: Նրա ճառագայթը լուսավորեց տիեզերքը ավելի պայծառ, քան արեգակը: Լույսի ծայրը ճախրելով ինչպես անիվ, գնում էր դեպի հյուսիս հանդարտ ու մեղմ: Լույսը ճառագայթում էր կարմիր ու սպիտակ, իսկ լույսի առջևից որպես թե աստղ, Արուսյակի չափ ընթանում էր մի թզաչափ հեռու: Իմ հայրը թողեց աղոթքի պահը, սկսեց լալով երգել ԳԿ (հայ երաժշտության ութ ձայնեղանակներից մեկը)՝շարականը՝ Լույսդ որ աստվածության լույսի ներքո է: Շարականն* ավարտեց, դեռ լույսը երևում էր: Ապա հեռացավ ու աներևութացավ: Լսեցինք, որ մինչև Ախալցխա տեսել են աստվածային հրաշափառ լույսը:

ԳԼՈՒԽ ԼԷ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս Հովհաննես վարդապետը Նոր Ջուղայից էր՝ Էդգարի որդին, որ կոչվում է Քթռեշ. սա աշակերտն էր Կեսարացի վարդապետի, որ Ջուղայի առաջնորդն էր: Խաչատուր վարդապետի հրամանով Հովհաննեսը գնաց Ֆրանգստան (Եվրոպա)՝ Լիվոռնո քաղաքը, տպագրություն սովորեց: Վերադարձավ Սպահան Խաչատուր

* Բնագրում՝ Ջ շարական, կարդացվում է վեց շարական, բայց մեզ թվում է այդտեղ զ-ն նախադրություն է: Շարականն աւարտեաց, մինչ երեւար լոյսն...